ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ

Հրաչյա Սարուխանը (Հրաչիկ Լյուդվիգի Սարուխանյան) հայ բանաստեղծ է և թարգմանիչ: Ծնվել է 1947 թ. սեպտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գուգարքի շրջանի Համզաչիման (այժմ՝ Մարգահովիտ, Լոռու մարզ) գյուղում:

Կիրովականի (Վանաձոր) թիվ 3 միջնակարգ դպրոցի շրջանավարտ է: 1970 թվականին ավարտել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի գեղանկարչության բաժինը, 1974 թվականին ուսումը շարունակել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում: 1977-1981 թվականներին աշխատել է Կիրովականի քաղաքային «Կայծ» թերթում: 1983 թվականին ավարտել է ԽՍՀՄ գրողների միությանն առընթեր գրական բարձրագույն դասընթացները (Մոսկվա): 1983 թվականից եղել է Կիրովականի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գրական մասի վարիչ, 2001 թվականից՝ ՀԳՄ Վանաձորի բաժանմունքի քարտուղար:

Հրաչյա Սարուխանի առաջին բանաստեղծությունը լույս է տեսել «Կայծ» թերթում 1966 թվականին: Հրատարակվել են նրա «Եզրագծեր» (1977), «Հրաշք օրեր» (1981), «Վկայություններ» (1989) (ՀԳՄ Ավ. Իսահակյանի անվան մրցանակ 1990-ին), «Այլ ժամանակներ» (1997), «Աստծո առավոտը» (1999), «Ի տրիտուր» (2005) ժողովածուները: Սարուխանի բանաստեղծություններին հատուկ են խոսքի որոշակիությունն ու սրությունը:

Հրաչյա Սարուխանն արժանացել է գրական տարբեր մրցանակների, Մարգահովիտի պատվավոր քաղաքացու կոչման: 1998-ին պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով: 2011 թվականին նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի կոչում:

Մահացել է 2016 թ. ապրիլի 8-ին Վանաձորում: